ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

*1.***Թեմայի անվանում, ժամաքանակը**
*2.***Նպատակները**
*3.***Խնդիրները**
*4.***Վերջնարդյունքները**
*5.***Բովանդակությունը**

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱ ԾՐԱԳԻՐ
(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան 68 ժամ)
5-8 դասարաններ

Աշխատանք բնական և արհեստական նյութերով *(15 ժամ)*
Նպատակը
• Դաստիարակել գեղագիտական ճաշակ: • Ինքնուրույն ստեղծարար աշխատելու կարողություն: • Գույների ընտրություն և գեղարվեստական ճաշակի զարգացում:
Խնդիրներ
• Ծանոթացնել բնական և արհեստական նյութերին: • Սովորեցնել կոկիկ աշխատել, պահպանել անվտանգ աշխատելու կանոնները:
Վերջնարդյունքներ

• Գնահատել բնական ռեսուրսները: • Կարողանա ճիշտ օգտագործել նյութերը:
Բովանդակություն
• Կոներով պատրաստել կոմպոզիցիաներ *(5 ժամ)* • Աշխատանք թղթով և ստվարաթղթով *(5 ժամ)* • Աշխատանք մանածագործական նյութերով *(5 ժամ)*

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա *(8 ժամ)*
Նպատակը
• Ներկայացնել հագուստի պատմությունը,նրա նշանակությունը մարդու կյանքում: • Ուսումնասիրել բուսական և կենդանական ծագում ունեցող գործվացքների հատկություններին՝ ըստ արտաքին տեսքի, թարս և շիտակ կողմերի:
Խնդիրներ
• Ծանոթացնել կարի տեսակներին: • Ճանաչեն և գործածեն կտրելու և կարելու համար անհրաժեշտ գործիքները: • Ծանոթացնել գծագրերի կառուցման հաժորդականությանը:
Վերջնարդյունքներ
• Կկարողանան կառուցել գծագրեր: • Կսովորեն կարել պարզ մոդելներ, պայուսկներ, դրամապանակներ: • Կզարգան ինքնուրույն աշխատելու կարողունակությունները:
Բովանդակություն
• Կարել պարզ գոգնոցներ *(2 ժամ)* • Կարել էկո պայուսակներ *(2 ժամ)* • Կարել խոհանոցային թաթմաններ *(2 ժամ)* • Կարել շապիկներ *(2 ժամ)*

Ասեղնագործություն *(15 ժամ)*
Նպատակը

• Հաղորդել տեղեկություններ ասեղնագործության մասին: • Սովորեցնել ստեղծել պարզ նախշեր: • Կատարել թելերի ճիշտ ընտրություն:
Խնդիրներ
• Սովորողները կծանոթանան ասեղնագործության մեջ օգտագործվող գործվածքների, թելերի և ասեղների տեսակներին: • Կծանոթանան անհրաժեշտ գործիքներին և հարմարանքներին: • Կզարգացնեն զարդանախշը փոխադրելու, պարզ նախշեր ասեղնագործելու կարողունակություններ:
Վերջնարդյունքներ
• Սովորողները կիմանան գործվածքի վրա էսքիզի փոխանցման ձևերը: • Կկատարեն ավանդական և ժամանակակից զարդանախշերի էսքիզներ: • Տարբեր նյութերով կկատարեն ապլիկացիոն աշխատանքներ:
Բովանդակություն
• Ասեղնագործել անձեռոցիկներ *(5 ժամ)* • Ասեղնագործել շապիկների վրա *(5 ժամ)* • Ասեղնագործել հայկական ավանդական զարդանախշերով սփռոցներ *(5 ժամ)*

Հելունագործություն *(15 ժամ)*
Նպատակը
• Ծանոթացնել հելունագործության գործընթացին: • Կատարել թելերի և գործիքների ընտրություն:
Խնդիրներ
• Կկարողանան տարբերել թելերի ամրությունը: • Ճիշտ կնտրեն թելերը և գործիքները: • Կսովորեն կոկիկ աշխատել:
Վերջնարդյունքներ
• Կկարողանան գեղարվեստական աշխատանքներ կատարել՝ օգտվելով նորաձևության ամսագրերից: • Կնպաստի առանցքային կոմպետեցիաների զարգացմանը, որը կբերի մասնագիտական կողմնորոշում:
Բովանդակություն

• Գործել խոհանոցային բռնիչներ *(5 ժամ)* • Գործել մանկական գլխարկներ *(5 ժամ)* • Գործել մազակալներ *(5 ժամ)*

Շյուղագործություն *(15 ժամ)*
Նպատակը
• Ծանոթացնել շյուղագործության գործընթացին: • Կատարել թելերի և գործիքների ընտրություն:
Խնդիրներ
• Ծանոթանա նոր գործվացքների և դրանց հատկությունների մասին: • Տարբերի կենդանական, բուսական և սինթետիկ թելերը:
Վերջնարդյունքներ
• Ճիշտ և անվտանգ օգտագործել շյուղագործության համար անհրաժեշտ գործիքներն ու հարմարանքները: • Կարողանան գործել հագուստներ և անհրաժեշտ այլ իրեր:
Բովանդակություն
• Գործել գուլպաներ *(5 ժամ)* • Գործել գլխարկներ *(5 ժամ)* • Գործել մանկական այլ իրեր *(5 ժամ)*